վոր վավերագրեր, որոնք վերաբերում են դիվանի և ոչ դիվանի գյուղերի սահմանների ճշտմանը։ Դրանցից առաջինը, գրված 1671 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, վերաբերում է Ապարանի մահալի Ափնագեղ և Կարբիի մահալի Սաղմոսավանք գյուղերի սահմանների ճշտմանը, յոթ քյադխուդաների, ինչպես նաև Կարբիի մահալի մելիք Հակոբի և Ապարանի մահալի մելիք Սիմեոնի մասնակցությամբ և ստորագրություններով[23]։ Իսկ երկրորդը մի մանրամասն արձանագրություն է, կազմված 1704 թ. էջմիածին և Քյուլթափա գյուղերի միջև ծագած սահմանային վեճի կապակցությամբ, ըստ որի ի վերջո երկու գյուղերի համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ և էշիգ-Աղասի Նաջաֆ-Ալի բեկի ղեկավարությամբ նորից վերանայվում և ճշտվում են Քյուլթափա գյուղի չորս սահմանները և նրա տերիտորիայի վրայով 20 զար՝ (մոտ 22 մետր) լայնությամբ մի ճանապարհ հատկացնում էջմիածնեցիներին, որպեսզի նրանք կարողանան իրենց անասունները այդ ճանապարհով տանել մինչև Այղր լիճը ջրելու[24]։

Այսպիսով պետական կամ դիվանի հողատիրությունը Արևելյան Հայաստանում կարելի է բնորոշել հետևյալ կերպ. պետությունն էր իրավական սեփականատերը այն բոլոր մշակելի հողերի, որոնք մտնում էին առանձին գյուղերի ցանքատարածությունների (քյոֆշան) մեջ և իրավական (շար՝ ի) ձևակերպմամբ, հաստատուն կալվածագրերով և այլ փաստաթղթերով որևէ անձնավորության կամ կրոնական հաստատության և կամ տվյալ գյուղի համայնքի սեփականությունը չէին կազմում և չէին մտցված արքունի շահական խասսերի շարքը։ Այդ հողերը պետական պաշտոնական վավերագրերում և նարատիվ աղբյուրներում անվանվում են «դիվանի հողեր» (արազի-յե դիվանի)[25]։ Դիվանի հողերից ստացվող ամբողջ ռենտա-հարկը գանձվում էր հոգուտ պետական գանձարանի։ Այդ հարկերը, որոնք տրվում էին և՛ բնամթերքով, և՛ կանխիկ դրամով, մեծ մասամբ ոչ թե ուղղակի մտնում էին պետական պահեստներն ու դիվանի դրամարկղը, այլ թիուլի և համեսալեի ձևով տրվում էին զինվորականությանն ու պետական բարձրաստիճան և կրտսեր պաշտոնեությանը ի դիմաց նրանց ռոճիկի, և կամ վարձակալվում էին առանձին արենդատորների՝ մուսթա՝ջիրների կամ զաբիթների կողմից։

XVI—XVII դարերի վավերագրերում «դիվանի» հողերից բացի հիշատակվում են նաև «խալիսե» հողեր։ Հայտնի է որ XVIII դարից սկսած և մինչև մեր ժամանակները Իրանում պետական հողերը կոչվում են «խալիսե»։ Մեր ձեռքի տակ կան XVII դարի մի քանի վավերագրեր, որոնք թույլ են տալիս ասելու, որ այդ ժամանակ «խալիսե» հողերը նույնպես համարվում էին պետական սեփականություն, սակայն դրանք վերաբերում էին անմիջապես տվյալ վիլայեթին, և նրանց եկամուտները ամբողջապես պատկանում էին խաներին ու բեկլաբեկիներին և տնօրինվում նրանց կողմից։ «Խալիսե» (خالصه) բառացի նշանակում է անխառն, զուտ ամբողջը։ Մեր կարծիքով այս կարգի պետական հողերը այդպես էին կոչվում այն պատճառով, որ դրանցից ստացվող ամբողջ ռենտա-հարկը պատկանում էր տեղական իշխանությանը։

Պետրուշևսկին «խալիսե» տերմինը շփոթում է մուլքերի վաճառքի ժամանակ կալվածագրերի վերջում վաճառվող օբյեկտի մասին գործածվող

[23] Տե՛ս Մատենադարան, կթղկ. ղվան, թղթ. 1բ, վավ. 167։

[24] Նույն տեղում, վավ. 214։